

ԵրՊԼՀ –ի 2005-2006ուս. տարվա ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

30. 09. 2005թ. N 1 նիստի

Նիստին մասնակցում էին Գիտական խորհրդի 44 անդամներից 41-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵրՊԼՀ-ի խորհրդի անդամների թեկնածուների հաստատում:
2. 2004-2005 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին: /գեկ. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյան/
3. Ընթացիկ հարցեր:
1. **Լսելով և քննարկելով** ԵրՊԼՀ-ի խորհրդի կազմում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուների հաստատման մասին հարցը, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ելնելով ԵրՊԼՀ-ի խորհրդի 2005թ. սեպտեմբերի 20-ի նիստի որոշումից՝ համալսարանի խորհրդի անդամների թիվը սահմանել 24 անդամ:
2. Հաստատել ԵրՊԼՀ-ի խորհրդի կազմում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված հետևյալ անձանց թեկնածությունները.
 1. Խաչատուր Արսենի Թևոսյան – մ.գ.թ., պրոֆեսոր, ֆիզ. դաստիարակության ամբիոնի վարիչ, համալսարանի արհմիության նախագահ
 2. Նարինե Ստեփանի Հովհաննիսյան - բ.գ.թ., դոցենտ, Անգլերեն/2-րդ մասնագիտություն/ ամբիոնի վարիչ
 3. Մելանյա Գրիգորի Աստվածատրյան – մ.գ.դ., պրոֆեսոր, Մանկավարժություն և լեզուների դասավանդման ամբիոնի վարիչ
 4. Կարինե Շահիջանի Աբրահամյան - բ.գ.թ., դոցենտ, Լեզվաբանություն և հաղորդակցության տեսության ամբիոնի վարիչ
 5. Վալերի Վաղարշակի Պողոսյան - փ.գ.թ., դոցենտ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնի վարիչ
 6. Իրինա Արտավազդի Աթաջանյան - բ.գ.թ., Ռուս գրականության ամբիոնի դոցենտ,
2. **Լսելով և քննարկելով** ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյանի հաղորդումը 2004-2005 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին, ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ընդունել ի գիտություն ուսումնական գծով պրոռեկտոր Գ.Գասպարյանի հաղորդումը 2004-2005 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին:
2. Այսուհետև որոշման նախագծում ընդգրկել կետ հանձնարարականների կատարման վերաբերյալ:
3. 2004-2005 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները համարել բավարար:
4. Արձանագրել, որ 2004-2005 ուս. տարվա գարնանային քննաշրջանը և լուծարումները կազմակերպվել են համապատասխան «ԵրՊԼՀ-ում քննաշրջանի կազմակերպման և անցկացման» կանոնակարգի:

4. 1 Նշել, որ ընդհանուր առմամբ առաջադիմության տոկոսը համալսարանում նվազել է **2. 6%**-ով համեմատ 2004/2005 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների և **6. 6%**-ի համեմատ 2003/2004 ուս. տարվա գարնանային քննաշրջանի:

4. 2. Նշել նաև.

ա/ լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի ընդհանուր առաջադիմության աճը ի հաշիվ գերազանց և լավ և գերազանց գնահատականներով հանձնած ուսանողների թվի զգալի աճի՝ գեր. **71-ից 151**, լավ և գեր **96-ից 268**:

բ/ ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետի առաջադիմության տոկոսի նվազումը ի հաշիվ անբավարար և քննությանը չներկայացած ուսանողների թվի աճի՝ **136-ից 171**:

գ/ խառը գնահատականներ ստացած ուսանողների թվի զգալի աճը՝ **445-ից 932**:

5. Հանձնարարել բոլոր ֆակուլտետների խորհուրդներին հատուկ քննարկման առարկա դարձնել ուսանողների առաջադիմության տոկոսի կտրուկ անկումը, համապատասխան ամբիոնների հետ համատեղ կատարել արդյունքների վերլուծություն, բացահայտել պատճառները և առաջարկներ ներկայացնել դրանց վերացման ուղղությամբ:

6. Ի կատարումն համալսարանի գիտական խորհրդի 29. 06. 05թ. Հ 6 որոշման հանձնարարել առաջին կուրսերում ուսումնական գործընթացն իրականացնող ամբիոններին ուսանողների առաջադիմության վարկանիշային գնահատման անցնելու նպատակով համապատասխան աշխատանքներ ծավալել միջանկյալ և կիսամյակային քննությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

7. Հանձնարարել ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետի խորհրդին հատուկ քննարկման առարկա դարձնել ռուսաց լեզվի և գրականության առարկաների բլոկի դասավանդումը և ծրագրային խնդիրներ,

8. ինչպես նաև կազմել ըստ ամբիոնների մասնագիտական խմբեր և համապատասխան ժամանակացույցեր ուսումնական ծրագրերի և ուսումնական նյութերի մշակման նպատակով:

9. Հանձնարարել ժամանակակից ռուսաց լեզվի և ռուս գրականության ամբիոններին վերանայել գործող ուսումնական ծրագրերը, դասավանդման նյութի ծավալն ու մեթոդները և անհրաժեշտության դեպքում մշակել նոր ծրագրեր թե գործնական և թե տեսական առարկաների դասավանդման բարելավման և ուսանողների գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով:

10. Հանձնարարել ֆակուլտետների խորհուրդներին հատուկ քննարկման առարկա դարձնել և մշտապես ուշադրության կենտրոնում պահել ԱՏ համակարգի ուսանողների առաջադիմության խնդիրները:

11. Հանձնարարել ֆրանսերենի և գերմաներենի ամբիոններին աշխատանքներ ծավալել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների առաջադիմության բարձրացման, համապատասխան ծրագրերի մշակման և դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

12. Սույն որոշման կատարումը դնել ֆակուլտետների ղեկավարների վրա, իսկ հսկողությունը՝ ուսումնական մասի վրա:

02. 11. 2005թ. N 2 նիստի

Նիստին մասնակցում էին 44 անդամներից 38-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵրՊԼՀ-ում հայցորդության և «Լավագույն գիտական աշխատություն» մրցույթ- ստուգատեսի կանոնակարգեր հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

1. Քննարկելով «ԵրՊԼՀ-ում հայցորդության» և «Լավագույն գիտական աշխատություն» մրցույթ- ստուգատեսի կանոնակարգերը, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Որոշ խմբագրական շտկումներից հետո հաստատել ԵրՊԼՀ-ում հայցորդության և «Լավագույն գիտական աշխատություն» մրցույթ- ստուգատեսի կանոնակարգերը:

02. 11. 2005թ. N 3 նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Կարգերի և կանոնակարգերի հաստատում /ԵրՊԼՀ-ի ֆակուլտետի դեկանների և ամբիոնի վարիչների ընտրության կարգեր, ԵրՊԼՀ-ի ամբիոնների կանոնակարգ/:

Քննարկելով ԵրՊԼՀ-ի ֆակուլտետի դեկանների և ամբիոնի վարիչների ընտրության կարգերը, ԵրՊԼՀ-ի ամբիոնների կանոնակարգը, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Բաց քվեարկության արդյունքների հիման վրա հաստատել ԵրՊԼՀ-ի ֆակուլտետի դեկանների և ամբիոնի վարիչների ընտրության կարգերը և ամբիոնների կանոնակարգը:

16. 12. 2005թ. N 4 նիստի

Նիստին մասնակցում էին 43 անդամներից 36-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Լավագույն ուսանող, լավագույն խումբ, կուրս, ֆակուլտետ» ստուգատես-մրցույթի արդյունքների մասին /զեկ. ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Գ. Գասպարյան/:
2. «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթի արդյունքների մասին / զեկ.՝ Դ.-Ղազարյան/
3. ԵրՊԼՀ-ի ամբիոնների գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների 2006թ. պլանների հաստատում:
4. Ֆակուլտետային խորհրդի կանոնակարգի, Գիտխորհրդի և ֆակուլտետի խորհրդի ընտրութունների անցկացման ընթացակարգի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյանի հաղորդումը «Լավագույն ուսանող, լավագույն խումբ, կուրս, ֆակուլտետ» ստուգատես-մրցույթի արդյունքների մասին, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. 2004/2005 ուս. տարվա «Լավագույն ֆակուլտետ» ճանաչել օտար լեզուների ֆակուլտետը:
2. 2004/2005 ուս. տարվա «Լավագույն ակադեմիական խումբ» ճանաչել օտար լեզուների ֆակուլտետի 5-րդ կուրսի ֆրանսերեն-անգլերեն բաժնի 7-րդ խումբը:
3. 2004/2005 ուս. տարվա «Լավագույն ուսանող» ճանաչել.
 - 1) *Վարսենիկ Սարգսյան* - օտար լեզուների ֆակուլտետ, «ֆրանսերեն-անգլերեն» բաժին, 5-րդ կուրս, 7-րդ խումբ (II տեղ-30000 դր.),
 - 2) *Աստղիկ Թառչոյան* - լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետ, «գերմաներեն լեզու և թարգմանություն» բաժին, 5-րդ կուրս (II տեղ 30000 դր.),
 - 3) *Տաթևիկ Հակոբյան* - ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետ, 5-րդ կուրս, «Ա» խումբ (III տեղ 20000 դր.):

Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանի հաղորդումը «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթի արդյունքների մասին, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

«Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես- մրցույթին ներկայացված ներքոնշյալ աշխատանքները արժանացնել խրախուսանքի.

1. Հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ՝ Զ. Հովհաննիսյան - «Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում»
2. Անգլերենի տեսության ամբիոնի դոցենտ ՝ Դ. Համբարձումյան - «Ուիլյամ Ֆոլքների երկերի լեզվաոճական առանձնահատկությունների պահպանման խնդիրը հայերեն թարգմանություններում»
3. Երկրագիտության ամբիոնի դոցենտ՝ Գ. Գասպարյան – «British studies» բուհական ձեռնարկ
4. ՅՈՒՆԵՍԿՕ- ի ամբիոնի դոցենտ՝ Վ. Պողոսյան - «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան

5. Հայագիտության ամբիոնի պրոֆեսոր՝ Ֆ. Խլղաթյան - «Ժամանակակից հայոց լեզու» - ուսումնական ձեռնարկ, Պրակ Ա
6. Ֆրանսերենի ամբիոնի դոցենտ՝ Վ. Ստեփանյան - «A la decouverte du texte» / տեքստի մեկնաբանություն / - ուսումնական ձեռնարկ
7. Գերմաներենի ամբիոնի դոցենտ՝ Ս. Բուլոբլյան - „Языковая структура и территориальные особенности лексики немецкого обиходно-разговорного языка /баварский ареал/, - մեկնագրություն
8. Ռուս գրականության ամբիոնի դոցենտ՝ Ի. Աթաջանյան - „ Учебное пособие по русской литературе /УНТ, Древнерусская литература, Литература 18 века/,„.

Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից ներկայացված գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների 2006թ. պլանների վերաբերյալ, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել ԵրՊԼՀ-ի ամբիոնների գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների 2006թ. պլանները:

Քննարկելով ԵրՊԼՀ-ի ֆակուլտետի խորհրդի կանոնակարգը և Գիտխորհրդի և ֆակուլտետի խորհրդի ընտրությունների անցկացման ընթացակարգը, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել ԵրՊԼՀ-ի ֆակուլտետի խորհրդի կանոնակարգը և Գիտխորհրդի և ֆակուլտետի խորհրդի ընտրությունների ընթացակարգը առաջարկվող փոփոխություններով:

23. 12. 2005թ N 5նիստի

Նիստին մասնակցում էին 43 անդամներից 35-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2006թ. ԵրՊԼՀ-ի բյուջեի նախագծի հաստատում:
/զեկ.՝ վարչատնտեսական գծով պրոռեկտոր Գ. Բալայան/
2. Ընթացիկ հարցեր:

Լսելով և քննարկելով վարչատնտեսական գծով պրոռեկտոր Գ. Բալայանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի 2006թ. բյուջեի նախագծի վերաբերյալ, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հավանություն տալ ԵրՊԼՀ-ի 2006թ. բյուջեի նախագծին և ներկայացնել համալսարանի խորհրդի հաստատմանը:
2. Համալսարանի աշխատակիցներին պարգևատրել մեկ աշխատավարձի չափով:

31. 01. 2006թ N 6 նիստի

Նիստին մասնակցում էին 40 անդամներից 37-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵրՊԼՀ-ի 2005թ. գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություն /զեկուցող՝ համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյան/:
2. ԵրՊԼՀ-ի 2005թ. ֆինանսական հաշվետվություն /զեկ.՝ վարչատնտեսական աշխ. գծով պրոռեկտոր Գ. Բալայան/:
3. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման կարգի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսելով** համալսարանի գիտքարտուղար՝ Դ. Ղազարյանի հաշվետվությունը ԵրՊԼՀ-ում 2005թ. իրականացված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ, ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Շնորհակալություն հայտնել համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանին իր արդյունավետ աշխատանքի համար և պարգևատրել նրան մեկ աշխատավարձի չափով:
 2. Գնահատել դրական 2005թ. ԵրՊԼՀ-ում իրականացված գիտահետազոտական աշխատանքները:
 3. Ի կատարումն համալսարանի ռեկտորատի 22. 01. 05թ. հ. 15 նիստի որոշման ա/ Յանձնարարել թողարկող ամբիոններին ակտիվացրել գիտական աշխատանքները ասպիրանտների հետ և ամբիոններին կից ստեղծված ՈԲԳԸ-ում:
բ/ Ասպիրանտների հետ կազմակերպել հատուկ մասնագիտական տեսական դասընթացներ:
 4. Ի կատարումն համալսարանի գիտխորհրդի 26. 02. 03թ. հ. 7 նիստի որոշման ա/ Յանձնարարել ֆակուլտետների խորհուրդներին և մրցութային հանձնաժողովներին պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցույթների կազմակերպման ժամանակ պարտադիր հաշվի առնել հավակնորդի կողմից կատարած գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքները:
բ/ Յանձնարարումն գիտահետազոտական աշխատանքներն ընդլայնելու նպատակով հանձնարարել ամբիոններին կազմակերպելու գիտական սեմինարներ, գիտահետազոտական աշխատանքների լայն քննարկումներ՝ ընդգրկելով ամբիոնների բոլոր աշխատակիցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով հրատարակության ներկայացվող աշխատանքների գիտական մակարդակին ու որակին, նրանց տեսական և գործնական նշանակությանը:
 5. Բարձր գնահատել գրականագիտություն և արտասահմանյան գրականություն ամբիոնի կատարած աշխատանքը ասպիրանտների հետ, ինչպես նաև ամբիոնի դասախոսների ակտիվ մասնակցությունը համալսարանի գիտական կյանքին և պարգևատրել ամբիոնի վարիչ Ե. Կարաբեգովային մեկ աշխատավարձի չափով:
 6. Յանձնարարել թողարկող ամբիոններին խստիվ պահապանել ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման ժամկետը /Յանձնվա ընթացքում/:
 7. Յանձնարարել ամբիոններին մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը գիտական մաս ներկայացնել հայցորդների տվյալները նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ:
 8. Մեկ ամսվա ընթացքում ֆակուլտետային խորհուրդներում լսել համալսարանի ռեկտորատի 22. 01. 05թ. հ. 15 նիստի որոշման չկատարված կետերը և հաշվետվությունը ներկայացնել գիտական մաս:
2. **Լսելով** վարչատնտեսական գծով պրոռեկտոր Գ. Բալայանի հաշվետվությունը ԵրՊԼՀ-ի 2005թ. ֆինանսատնտեսական աշխատանքների ուղղությամբ, ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Ընդունելի գիտություն վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Բալայանի հաշվետվությունը և հավանություն տալ 2005թ. ԵրՊԼՀ-ում իրականացված ֆինանսատնտեսական աշխատանքներին:

3. **Քննարկելով** համալսարանի Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման կարգը, ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման կարգը:
2. Հանձնարարել ուսումնական մասին մարտ ամսին գիտխորհրդին զեկուցել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման բաժնի ստեղծման և աշխատանքների մասին:

01. 03. 2006թ. N 7 նիստի

Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 55անդամներից 44-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2005/2006 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին /զեկ. ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր Պ. Գասպարյան/:
2. ԵրՊԼՀ-ի պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու կարգի և Գիտխորհրդին կից հանձնաժողովների կառուցվածքի և աշխատակարգի հաստատում:
3. Մրցույթ:
4. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ. Գասպարյանի հաշվետվությունը 2005-2006 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ի գիտություն ընդունել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ. Գասպարյանի հաղորդումը 2005-2006 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:

2. 2005-2006 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

3. Արձանագրել.

3.1 2005-2006 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջադիմության բարձրագույն տոկոսը (86,7%), քննաշրջանին միայն գերազանց (332) և գերազանց ու լավ գնահատականներով (414) հանձնած ուսանողների առավելագույն թիվը ապահովել է օտար լեզուների ֆակուլտետը

3.2. նույն ֆակուլտետի վճարովի համակարգի առաջադիմության տոկոսի նվազագույն տարբերությունը անվճար համակարգի համեմատ

4. Համարել բավարար օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետներում իրականացված առաջին կուրսի ուսանողների առաջադիմության վարկանիշային գնահատման գործընթացը միջանկյալ և կիսամյակային քննությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ՝ մշտնջենական մոնիթինգի և ֆակուլտետի ուսանողների առաջադիմության բարձր տոկոսը:

5. Հանձնարարել օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետների խորհուրդներին ի կատարումն ՀՀ Կառավարության 23. 01. 06թ. որոշման 3. ա կետի, կազմակերպել ֆակուլտետային խորհուրդներում ամենամսյա քննարկումներ կրեդիտային համակարգի ներդրման ընթացքի վերաբերյալ:

6. Հանձնարարել ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետի խորհրդին, ի կատարումն, ՀՀ Կառավարության 23. 01. 06թ. որոշման ամբիոնների հետ համատեղ օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետների օրինակով մինչև ս. թ. ապրիլի 1-ը մշակել ուսանողների առաջադիմության վարկանիշային գնահատման համակարգը և մինչև ս. թ. մայիսի 1-ը ավարտել 2006-2007 ուս. տարում կրեդիտային համակարգի անցնելու նախապատրաստական աշխատանքները:

7. Հանձնարարել համալսարանի բոլոր լեզվական ամբիոններին սկսել տեսական առարկաների կրեդիտային համակարգի ներքո մշակման և ձևակերպման գործընթացը և մինչև 2006-2007 ուս. տարվա ավարտը համապատասխան ֆակուլտետների խորհուրդների քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել տվյալ դասընթացների ծրագիր-ուղեցույցերը:

8. Հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետների խորհուրդներին մշակել և մինչև ս. թ. ապրիլի 1-ը ռեկտորատի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել համապատասխան միջոցառումների ժամանակացույց 2006-2007 ուս. տարում կրեդիտային համակարգի ներդրումն ապահովելու նպատակով:

9. Հանձնարարել համալսարանի տնտեսական մասին ուսումնական մասի և ամբիոնների հայտերի հիման վրա նախատեսել համապատասխան միջոցներ տեխնիկական հագեցվածությունը ապահովելու և ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրումը ապահովելու նպատակով:

10. Սույն որոշման կատարումը դնել ֆակուլտետների ղեկավարների վրա, իսկ հսկողությունը՝ ուսումնական մասի վրա:

2. Քննարկելով ԵրՊԼՀ-ի պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու կարգը, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Խմբագրական որոշ շտկումներից հետո հաստատել ԵրՊԼՀ-ի պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու կարգը:

3. Քննարկելով գիտխորհրդին կից հանձնաժողովների կառուցվածքը և աշխատակարգը, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Խմբագրական որոշ շտկումներից հետո հաստատել գիտխորհրդին կից հանձնաժողովների կառուցվածքը և աշխատակարգը:

29. 03. 2006թ. N 8 նիստի

Նիստին մասնակցում էին 55 անդամներից 44-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵրՊԼՀ-ի հենակետային վարժարանի հիման վրա «Լեզուների կենտրոն»-ի ստեղծման գործընթացի վերաբերյալ /զեկ. Ա. Զիթչյան/:
2. Ուսումնական մասի ենթակայությամբ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագրի վերաբերյալ:
3. ԵրՊԼՀ-ի խմբագրական-հրատարակչական խորհրդի կանոնակարգի հաստատում:
4. ԵրՊԼՀ-ի գիտխորհրդին կից հանձնաժողովների կազմի հաստատում:
5. Մրցույթ /ֆրանսերենի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման համար/:
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ - ԵրՊԼՀ-ի հենակետային վարժարանի տնօրեն Ա. Զիտչյանի զեկուցումը հենակետային վարժարանի հիման վրա «Լեզուների կենտրոն»-ի ստեղծման գործընթացի վերաբերյալ: «Լեզուների կենտրոն»-ի ստեղծման նախագիծը հիմնվում է ԵրՊԼՀ-ի գիտխորհրդի 15. 04. 05թ. հ. 5 որոշման վրա, ըստ որի ԵրՊԼՀ-ի հենակետային վարժարանի նյութատեխնիկական բազայի վրա ստեղծվելու է ԵրՊԼՀ-ի «Լեզուների կենտրոնը», որի հիմնական նպատակը կլինի լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման միջոցով բավարարել քաղաքացիների և հասարակական կրթական պահանջմունքները լեզվամշակութային ոլորտում:

Կենտրոնի ստեղծման հիմքում դրված է կրթության մասին օրենքի 24 հոդվածի 6-րդ կետը, համաձայն որի բարձրագույն ուսումնական հաստատությունը իր բնույթին համապատասխան և օրենքով սահմանված կարգով, կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցված մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական և այլ կրթական ծրագրեր:

«Լեզուների կենտրոնը» հնարավորություն կտա ԵրՊԼՀ-ի ամբիոններին արմատավորելու օտար լեզուների դասավանդման իրենց առաջավոր մեթոդական մշակումները փորձարկել նոր ձեռնարկներ, ինչպես նաև փոխանցել իրենց փորձը և պրակտիկ մեթոդական օգնություն ցույց տալ սովորողներին:

Առկա մեթոդական և նյութատեխնիկական բազան կարող է հիմք հանդիսանալ «Լեզուների կենտրոնի» ստեղծման համար, հետագայում դրանք հավելելու ակնկալինքով՝ Ուսուցումը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

ա/ նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցում

բ/ տարրական և միջին դպրոցի աշակերտների ուսուցում

գ/նախապատրաստական դասընթացների կազմակերպում բուհական ընդունելության քննությունների համար /հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն/

դ/ մեծահասակների ուսուցում

ե/ մասնագիտական լեզվի ուսուցում ըստ համապատասխան ոլորտների

Խմբերում լեզուների հետ համընթաց իրականացվելու է տարբեր գեղագիտական և մշակութային ծրագրեր:

Ուսուցումը կիրականացվի ԵրՊԼՀ-ի հայագիտության, գործնական ռուսաց լեզվի, օտար լեզուների ամբիոնների կողմից մշակված հատուկ ծրագրերով, որոնք իրենց մեջ կներառեն նոր կրթական համակարգի պահանջները:

Լեզվական խմբի խտությունը սահմանվում է մինչև 15 դիմորդ: Դասընթացի տևողությունը տարվա կտրվածքով կազմում է 34 շաբաթ, շաբաթական նախատեսվում է հայոց և ռուսաց լեզուներից՝ 6-ական ժամ. օտար լեզուներից՝ /անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն/՝ 8-ական ժամ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ի գիտություն ընդունել հենակետային վարժարանի տնօրեն Ա. Զիթչյանի զեկույցը «Լեզուների կենտրոն»-ի ստեղծման գործընթացը կազմակերպելու մասին:

2. Արձանագրել.

ա/ համալսարանի լեզվական, մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի, հոգեբանության ամբիոնների կողմից մշակված ծրագրերն ու նյութերը կարող են հիմք հանդիսանալ կենտրոնի 1-ին փուլի /նախադպրոցական/ գործընթացը սկսելու համար:

բ/ ընթացքի մեջ են տարրական և միջին դպրոցի երեխաների համար

նախատեսված օտար լեզուների ուսուցման ծրագրերը:

գ/ դրական համարել համալսարանի ուսանողության ակտիվ մասնակցությունը կենտրոնի ապագա գործունեության նախապատրաստական աշխատանքներին:

3. հանձնարարել օտար լեզուների ամբիոններին մինչև սույն թվականի հունիսի 30-ը ներկայացնել համապատասխան մասնագետներ կենտրոնում աշխատելու համար:

4. Մինչև սույն թվականի սեպտեմբերի 1-ը ավարտել «Լեզուների կենտրոն»-ի գործունեությունը՝ նախօրոք իրականացնելով ընդունելության հետ կապված նախապատրաստական աշխատանքները /գովազդ, հավաքագրում/:

5. Հանձնարարել անգլերեն լեզու/2-րդ մասնագիտություն/, ֆրանսերենի, գերմաներենի, 2-րդ օտար լեզվի, ռուսաց լեզվի, հայագիտության ամբիոններին, ինչպես նաև մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, հոգեբանության ամբիոններին մշակել և համալսարանի գիտական խորհրդին ներկայացնել՝

ա/մինչև 2006 թվականի սեպտեմբեր ամիսը՝ տարրական և միջին դպրոցի աշակերտների լեզվական դասընթացների ծրագիր,

բ/մինչև 2006 թվականի սեպտեմբեր ամիսը՝ բուհական ընդունելության նախապատրաստական դասընթացների ծրագիր,

գ/ մինչև 2007 թվականի հունվար ամիսը՝ մասնագիտական լեզվի ուսուցման ծրագիր,

դ/ մինչև 2007թ. սեպտեմբեր ամիսը՝ մեծահասակների ուսուցման ծրագիր:

6. Հանձնարարել համալսարանի տնտեսական մասին՝ կազմակերպելու և մինչև օգոստոսի 25-ը ավարտելու կենտրոնի համար նախատեսված

տարածքի մասնակի վերանորոգման, կահավորման և ձևավորման

աշխատանքները:

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Գ. Գասպարյանի վրա:

2. Լսելով և քննարկելով ուսումնական մասի կողմից ներկայացված պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագիրը, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Համալսարանի ուսումնական մասի ենթակայությամբ ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման բաժին:

2. Հանձնարարել համալսարանի ուսումնական մասին մինչև ս. թ. մայիսի 30-ը մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման բաժնի կանոնակարգը:

3. Հաստատել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ուսումնական պլանի հետևյալ բաղադրիչները.

ժամային բաղադրիչ՝ 80-150 ժամ բովանդակային բաղադրիչ՝

- *ընդհանուր կրթական*՝ մանկավարժության, կրթության և լեզուների դասավանդման ժամանակակից մոտեցումները (10 ժամ, 5 հանդիպում)

- *ընդհանուր մասնագիտական* ընդհանուր լեզվաբանություն (20 ժամ, 10 հանդիպում)

- *հատուկ մասնագիտական* մասնավոր լեզվի տեսության կամ տիպաբանական բնույթի արդի խնդիրներ (40 ժամ, 20 հանդիպում)

- *լեզվամշակութաբանություն և միջմշակութային հաղորդակցություն* (10 ժամ, 5 հանդիպում)

- *համակարգչային դասընթաց* (20 ժամ, 10 հանդիպում)

- *կամընտրական դասընթաց*

- *գիտամեթոդական հետազոտական աշխատանք*

4. Հանձնարարել մանկավարժության և լեզուների դասավանդման, ընդհանուր լեզվաբանության, անգլերենի տեսության, ֆրանսերենի, գերմաներենի, ժամանակակից ռուսաց լեզվի, ռուս

գրականության, գրականագիտության և արտասահմանյան գրականության, հայագիտության, հոգեբանության ամբիոններին և համակարգչային կենտրոնին մշակել և մինչև ս. թ. մայիսի 30-ը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել բովանդակային բաղադրիչն ապահովող համապատասխան ուսումնական ծրագրեր:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի վրա:
3. **Քննարկելով ԵրՊԼՀ-ի** խմբագրական-հրատարակչական խորհրդի կանոնակարգը, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել ԵրՊԼՀ-ի խմբագրական-հրատարակչական խորհրդի կանոնակարգը:

4. **Լսելով և քննարկելով** ԵրՊԼՀ-ի գիտխորհրդին կից հանձնաժողովների կազմի վերաբերյալ համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանի հաղորդումը, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել ներկայացված հանձնաժողովների կազմը, իսկ հաջորդ գիտխորհրդում քննարկել իլրումն անդամների թեկնածությունները:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- Ս. Տ. Ջոլյան - նախագահ
Դ. Ղազարյան - քարտուղար
1. Լ. Բրուտյան - բ.գ.դ., պրոֆեսոր
 2. Ա. Բարլեգիզյան - բ.գ.դ., պրոֆեսոր
 3. Մ. Աստվածատրյան - մ.գ.դ., պրոֆեսոր
 4. Ֆ. Խլղաթյան - բ.գ.թ., պրոֆեսոր
 5. Ե. Կարաբեկովա - բ.գ.դ.
 6. Ռ. Կայծունի - փ.գ.թ., պրոֆեսոր
 7. Ե. Ալեքսանյան - բ.գ.դ., պրոֆեսոր
 8. Լ. Մարկոսյան - բ.գ.թ., դոցենտ
 9. Դ. Գյուրջինյան - բ.գ.թ., դոցենտ
 10. Կ. Նալչաջյան - հ.գ.թ., դոցենտ
 11. Ն. Ռաֆայելյան - մ.գ.թ., դոցենտ

Ուսումնամեթոդական հանձնաժողով

- Գ. Ռ. Գասպարյան - նախագահ
1. Մ. Ավագյան - փ.գ.թ., դոցենտ
 2. Հ. Ճանճապանյան - մ.գ.թ., դոցենտ
 3. Մ. Եղիազարյան - մ.գ.թ., դոցենտ
 4. Վ. Ստեփանյան - բ.գ.թ., դոցենտ
 5. Գ. Վարդունյան - պ.գ.թ.,
 6. Հ. Հարությունյան - հ.գ.թ., դոցենտ
 7. Դ. Հակոբյան - ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի ասիստենտ
 8. Լ. Ֆլջյան - բ.գ.թ.,
 9. Ռ. Կարապետյան - գերմաներենի ամբիոնի դասախոս
 10. Ս. Նուրալովա - բ.գ.թ., դոցենտ
 11. Մ. Սարգիսովա - բ.գ.թ.
 12. Ա. Սարգսյան - ուսումնական մասի վարիչ

Ֆինանսատնտեսական հանձնաժողով

Գ. Կ. Բալայան - նախագահ

1. Ն. Դավթյան - գլխ. հաշվապահ
2. Յու. Տոնոյան - գլխ. ինժեներ
3. Ա. Պետրոսյան - տնտ. մասի վարիչ
4. Գ. Ջալալյան - ռեկտորի խորհրդատու
5. Ն. Ներսիսյան - իրավախորհրդատու
6. Խ. Թևոսյան - արհկոմի նախագահ
7. Հ. Մանուկյան - մատ. բաժնի վարիչ

24. 05. 2006թ. N 9 նիստի

Նիստին մասնակցում էին 55 անդամներից 48-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բոլոնյան գործընթացի սկզբունքների կիրառումը ԵրՊԼՀ-ում /զեկ. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյան/:
2. Հայերենագիտության դասավանդման հեռանկարային ծրագրերը /զեկ. հայագիտության ամբիոնի վարիչ՝ Ֆ. Խլղաթյան/
3. Գիտխորհրդին կից գիտության և ուսումնամեթոդական հանձնաժողովների կազմի համալրում:
4. ԵրՊԼՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրության հաստատում:
5. Մրցույթ - փակ/գաղտնի/ քվեարկություն
ա/ Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի դեկանի պաշտոնի տեղակալման համար
բ/ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար
6. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդին հրավիրված էր նշանավոր լրագրող Արմեն Հովհաննիսյանը: **ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը շնորհավորեց Արմեն Հովհաննիսյանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ և նրան պարգևատրեց համալսարանի հուշամեդալով:**

Լսելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը գիտխորհրդի քվորումի և օրակարգի վերաբերյալ գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել գիտխորհրդի օրակարգը առանց 4-րդ կետի՝ ԵրՊԼՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրության հաստատման՝ կանոնադրության թերի մշակման պատճառով:

1. **Լսելով** ԵրՊԼՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյանի զեկուցումը ԵրՊԼՀ-ում Բոլոնյան գործընթացի սկզբունքների կիրառման վերաբերյալ, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. ԵրՊԼՀ-ում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների տեղայնացման գործընթացը համարել բավարար:
2. Հանձնարարել ուսումնական մասի բարեփոխումների բաժնին մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը ավարտել ֆակուլտետային պատասխանատուների /կոորդինատորների/ նախապատրաստումը 2006/2007 ուս. տարում ԵրՊԼՀ-ում ամբողջովին կրեդիտային համակարգին անցնելու գործընթացին /պատասխանատու՝ Ս. Կարախանյան/:
3. Հանձնարարել բարեփոխումների բաժնի դեկավար Ս. Կարախանյանին մինչև ս. թ. սեպտեմբերի 15-ը ֆակուլտետների դեկանների և պատասխանատուների հետ համատեղ մշակել 2006-2007 ուս. տարվա աշխատանքային ծրագիրը կրեդիտային համակարգի ներդրման և իրականացման վերաբերյալ:
4. Հանձնարարել տնտեսական մասի և ֆակուլտետների դեկաններին ստեղծել ֆակուլտետային պատասխանատուների համար տեխնիկական միջոցներով ապահովված աշխատատեղեր:

5. Հանձնարարել համալսարանի համակարգչային կենտրոնին ստեղծել ուսանողների ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգի շրջանակներում կազմակերպելու համար համալսարանի ներքին ցանց “internet” /պատասխանատու՝ Վ. Վարդանյան/:
6. Հանձնարարել համալսարանի ամբիոններին ՈՒՏՍ բաժնի և համակարգչային կենտրոնի հետ համատեղ ստեղծել ուսումնական նյութերի բանկ /CD-ներ, տեսանյութեր, դասընթացների էլեկտրոնային տարբերակներ և այլն/ համալսարանի ներքին ցանցում տեղադրելու նպատակով:
7. Հանձնարարել համալսարանի գրադարանին ս. ք. սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում կազմակերպել աշխատանքներ առաջին կուրսի ուսանողների հետ էլեկտրոնային գրադարանից օգտվելու ուղղությամբ /պատասխանատու՝ Կ. Խաչատրյան/:
8. Հանձնարարել ֆակուլտետային պատասխանատուներին ս. ք. սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում կազմակերպել աշխատանքներ ուսանողներին Բոլոնիայի գործընթացի սկզբունքների կիրառման և կրթական նոր համակարգին ծանոթանալու վերաբերյալ:
9. Հանձնարարել համալսարանի ֆակուլտետային խորհուրդներին մինչև ս. ք. հունիսի 15-ը կազմակերպել 1-ին և 2-րդ կուրսերի համար նախատեսված դասընթացների ուղեցույցների քննարկումն ու հաստատումը:
10. Հանձնարարել համալսարանի բոլոր ամբիոններին մինչև ս. ք. սեպտեմբերի 15-ը ստեղծել աշխատանքային խմբեր համապատասխան մասնագիտական իրազեկությունների նկարագրերը մշակելու նպատակով:
11. Հանձնարարել ուսումնական մասին և մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնին մշակել հատուկ դասընթաց ուսանողներին և համալսարանում վերապատրաստում անցնող դասախոսներին Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին ծանոթանալու նպատակով:
12. Հանձնարարել հայագիտության ամբիոնին կյազմակերպել Բոլոնիայի գործընթացի հետ կյապված նյութերի հայերեն թարգմանությունների խմբագրումը:
13. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին մինչև ս. ք. դեկտեմբերի վերջը հրատարակման պատրաստել իրենց ֆակուլտետներում ըստ մասնագիտությունների դասավանդվող առարկաների նկարագիր-ուղեցույցները:
14. Հանձնարարել գիտխորհրդին կից գործող, ինչպես նաև համալսարանի ռազմավարությունը մշակող հանձնաժողովներին, ուսումնական մաս յուրաքանչյուր ուղղությամբ առաջարկներ ներկայացնել Բոլոնիայի գործընթացի սկզբունքների կիրառման վերաբերյալ:
15. Սույն գործընթացի իրականացումը դնել ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների, ֆակուլտետային պատասխանատուների, համակարգչային կենտրոնի, ՈՒՏՍ բաժնի, գրադարանի, ուսումնական մասի բարեփոխումների բաժնի, իսկ հսկողությունը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի վրա:

2. Լսելով հայագիտության ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Ֆ. Խլղաթյանի հաշվետվությունը հայերենագիտության դասավանդման հեռանկարային ծրագրերի մասին, ԵրՊԼՀ-ի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ր Մ Է

1. Հավանություն տալ զեկուցման մեջ առաջ քաշված առաջարկություններին և ծրագրային հիմնադրույթներին:
2. Նշված ծրագրային հիմնադրույթների իրականացման նպատակով.
 2. 1 Հանձնարարել հայագիտության ամբիոնին մինչև 2006թ. դեկտեմբեր ամիսը
 - 2.1.1 Վերանայել հայագիտական առարկաների ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով եվրոպական հայեցակարգի ծրագրերին, հետևաբար նաև համալսարանի առջև դրված կոնկրետ խնդիրներին, այն է՝ նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ներդրումը, կրեդիտային համակարգի ներդրումը, ուսանողների կողմից ընտրած մասնագիտության առանձնահատկություններին համապատասխան գրավոր և քանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակում և այլն:
 - 2.1.2 Հայերենին չտիրապետող հայ և արտասահմանցի ուսանողների համար մշակել հատուկ մեթոդիկա և դասընթաց:

- 2.1.3 Նոր ծրագրերին և թեմատիկ պլաններին համապատասխան ստեղծել ուսումնական բնույթի տեսական և գործնական ձեռնարկներ, մեթոդական ցուցումներ, դիդակտիկ պարագաներ:
- 2.1.4 Ուսանողների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու նպատակով հատուկ աշխատանք տանել ստեղծագործող ուսանողների հետ, նրանց լավագույն գործերը հրատարակել ավանախմբերի ձևով:
- 2.1.5 Անցկացնել միջֆակուլտետային առարկայական ամենամյա օլիմպիադաներ հայագիտության գծով, ինչպես նաև համագործակցել այլ հայերենագիտական կենտրոնների հետ:
- 2.1.6 Ամբիոնի գիտահետազոտական և ուսամնամեթոդական աշխատանքների ծրագրերը համապատասխանեցնել ամբիոնի առջև դրված խնդիրներին՝ գլխավոր ուղղություններ դարձնելով հայերենը որպես օտար լեզվի դասավանդումը, լեզվի այժմեական գործառական խնդիրների ուսումնասիրումը և զուգադրական ուսումնասիրությունները: Հավանության արժանացած աշխատանքները հրատարակել առանձին պրակներով մինչև 2007թ. փետրվար ամիսը՝ շարունակելով արդեն ստեղծված ավանդույթը:
- 2.1.7 Համալրել ամբիոնի ինտերնետային կայքը նոր ծրագրերով, թեմատիկ պլաններով և գործնական աշխատանքի նյութերով:
- 3.0 Հանձնարարել ուսումնական մասին.
- 3.1 Հաշվի առնելով «թարգմանչություն» և «միջազգային լրագրություն» մասնագիտությունների գծով հայոց լեզվի կարևոր դերը, այդ առարկայի դասավանդումը շարունակել մինչ վերջին կուրս՝ հատուկ ուշադրություն դարձնելով գրավոր խոսքի հմտությունների զարգացման վրա:
- 3.2 Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին քննարկելու վերոնշյալ մասնագիտության մագիստրատուրայում նախատեսելու գրաբարի ուսումնասիրության հարցը՝ 2 կիսամյակի ծավալով, 2-ական ժամով:
- 4.0 Հանձնարարել օտար լեզուների ամբիոններին .
- 4.1 Ջուգադրական բնույթի կուրսային և դիպլոմային աշխատանքների ղեկավարման, գրախոսման գործում, ինչպես նաև պաշտպանության հանձնաժողովներում ընդգրկել հայոց լեզվի մասնագետների:
- 4.2 Հանձնարարել տնտեսական մասին.
Կրեդիտային համակարգի արմատավորման հետևանքով ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խորհրդատվություն և ստուգում անցկացնելու, ամբիոնային գրադարանի ստեղծման նպատակով ստեղծել համապատասխան պայմաններ :

3. **Լսելով** համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանի հաղորդումը գիտխորհրդին կից գիտության և ուսումնամեթոդական հանձնաժողովների կազմի համալրման մասին, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ի փոփոխումն և ի լրումն ԵրՊԼՀ-ի գիտական խորհրդի 29. 03. 2006թ. հ. 8 նիստի որոշման, գիտխորհրդին կից գիտության և ուսումնամեթոդական հանձնաժողովներում ընդգրկել հետևյալ անձանց.

1. Օտար լեզուների ֆակուլտետ - գիտության հանձնաժողովի կազմում ընդգրկել ուսումնական աշխատանքների գծով **պրոֆեսոր, ք. գ. թ. ,դոցենտ Գ. Գասպարյանին**, ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմից հանել գերմաներենի ամբիոնի դասախոս Ռ. Կարապետյանին և կազմում ընդգրկել **մ.գ.թ., դոցենտ Ա. Էյրամջյանին**:
2. Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետ – ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմից հանել **Դ. Հակոբյանին և Գ. Վարդումյանին**:
3. Ուսանողական խորհուրդ - գիտության հանձնաժողովում ընդգրկել **Լենա Ատոնյանին և Եվա Բախշինյանին**, ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ընդգրկել **Մարիա Բարադանյանին և Հայկ Ղազարյանին**:

04.07. 2006թ. N10 նիստի

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 42-ը :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2005-2006 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին /զեկ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Գասպարյան/:
2. Ֆրանսերենի և ֆրանսագիտության զարգացման հեռանկարները ԵրՊԼՀ-ում /զեկ.՝ ֆրանսերենի ամբիոնի վարիչ Ն. Մանուկյան/:
3. Համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման խնդիրների մասին:
4. Ուսումնական մասի վարիչ Ա.Սարգսյանի հաղորդումը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքների ընթացքի մասին:
5. Ժամանակակից ռուսաց լեզվի և գործնական ռուսաց լեզվի ամբիոնների միացման մասին:
6. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով և քննարկելով Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Գասպարյանի հաղորդումը 2005-2006 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին, ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ի գիտություն ընդունել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյանի հաղորդումը 2005/2006 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին:
2. 2005/2006 ուս. տարվա պետական քննությունների արդյունքները համարել բավարար:
3. Նշել, որ 2004/2005 ուս. տարվա պետական քննությունների համեմատությամբ դրական արդյունքները աճել են 2,4%-ով՝ ի հաշիվ “անբավարար” և “խառը” գնահատականների զգալի նվազման:
4. Նշել պետական քննական հանձնաժողովների նախագահների բարձր գնահատականը օտար լեզուների և ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետներում օտար լեզվի, որպես 2-րդ մասնագիտություն, դրվացքի և ինացության որակի վերաբերյալ:
5. Նշել նաև դիպլոմային աշխատանքների կատարման և պաշտպանության ընթացքում տեղ գտած լուրջ թերությունները հատկապես ռուս գրականության,

գրականագիտության և արտասահմանյան գրականության և գերմաներենի ամբիոններում:

6. Ելնելով պետական քննական հանձնաժողովների նախագահների առաջարկություններից՝ հանձնարարել.

- ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնին վերանայել պետական քննությունների հարցաշարերը՝ վերաձևակերպելով և արդիականացնելով քննական տոմսերի հարցեր՝ նախատեսելով քննության գրավոր բաղադրիչ և տեքստի մեկնաբանություն
- ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնին վերանայել ռուսաց լեզվի տեսական և գործնական առարկաների ուսումնական ծրագրերը, նրանց հատկացված ժամաքանակը, խնդիրներն ու նպատակները առավելագույնս դիտարկելով դրանք լեզուների դասավանդման նորագույն մեթոդների տեսանկյունից, հատուկ ուշադրություն դարձնելով բանավոր և գրավոր խոսքի հմտությունների զարգացմանը
- ռուս գրականության ամբիոնին՝ վերանայել պետական քննական տոմսերը, վերաձևակերպել ուսանողի ընտրությանը տրվող հարցերը, բացառել ընդգրկված թեմաների անհամաչափությունները
- ռուս գրականության ամբիոնին՝ վերանայել դիպլոմային աշխատանքների թեմաները, ղեկավարների թեկնածությունները և արդիականացնել մատենագրության ցանկը՝ ուսումնասիրության առարկա դարձնելով ժամանակակից քննադատական գրականության խնդիրներն ու մոտեցումները:
- գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնին վերանայել դիպլոմային աշխատանքների թեմաները և դրանց ձևակերպումները
- գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնին հատուկ քննարկման առարկա դարձնել դիպլոմային աշխատանքների ղեկավարման և գրախոսման խնդիրը և արդյունքների մասին զեկուցել ֆակուլտետի խորհրդին
- մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնին հատուկ քննարկման առարկա դարձնել պետական քննական տոմսերի գործնական հարցերը՝ ապահովելով դրանց միասնականությունն ու բովանդակային և ծավալային համարժեքությունը
- անգլերենի /որպես 2-րդ մասնագիտություն/ և 2-րդ օտար լեզվի ամբիոններին վերանայել տեսական առարկաների ծրագրերը՝ ապահովելով դրանց բովանդակային և ծավալային միասնականությունը
- գերմաներենի ամբիոնին հատուկ քննարկման առարկա դարձնել շրջանավարտների գիտելիքների ոչ լիարժեք մակարդակի, ինչպես նաև դիպլոմային աշխատանքների կատարման որակի հարցը և արդյունքների մասին զեկուցել ֆակուլտետի խորհրդին
- անգլերենի տեսության, ֆրանսերենի և գերմաներենի ամբիոններին վերանայել լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի քննական տոմսերում ընդգրկված մեկնաբանության ենթակա տեքստերը և փոխարինել դրանք տվյալ ֆակուլտետի մասնագիտացումների բովանդակությունը ապահովող տեքստերով:

7. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին և թղարկող ամբիոններին մինչև ս.թ. հոկտեմբերի 30-ը քննարկման առարկա դարձնել պետական քննական հանձնաժողովների նախագահների առաջարկությունները՝ դրանք ուսումնական գործընթացում առավելագույնս ներմուծելու նպատակով:
8. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին և թղարկող ամբիոններին մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը հատուկ քննարկման առարկա դարձնել դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրությունը, դրանց արդիականության աստիճանը, ոչ ինքնուրույն գրելու խնդիրները, ինչպես նաև կատարման ընթացքի հսկողությունը:
9. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին հատուկ քննարկման առարկա դարձնել դիպլոմային աշխատանքների ղեկավարների և գրախոսների ընտրության և հաստատման խնդիրը:
10. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին և թղարկող ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել դիպլոմային աշխատանք գրող ուսանողների ընտրությանը, նրանց գիտական ներուժի ճիշտ ուղղորդմանը՝ ապահովելով «կուրսայինից դեպի դիպլոմային աշխատանք» անցումը հատկապես ասպիրանտուրա ընդունվող հավակնորդների հարցում:
11. Հանձնարարել ուսումնական մասին մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը վերանայել և լրամշակել «Համալսարանում կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման» Կանոնակարգը նոր պահանջների ներքո:
12. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի թղարկող ամբիոնների վարիչների և համապատասխան ֆակուլտետների ղեկավարների, իսկ հսկողությունը՝ ուսումնական մասի վրա:

2. Լսելով և քննարկելով Ֆրանսերեն ամբիոնի վարիչ Ն.Մանուկյանի զեկուցումը ԵրՊԼՀ-ում ֆրանսերենի և ֆրանսագիտության զարգացման հեռանկարային ծրագրերի մասին , գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հավանություն տալ զկուցման մեջ առաջ քաշված առաջարկություններին և ծրագրային հիմնադրույթներին:
2. Արձանագրել, որ ֆրանսերենի և ֆրանսագիտության զարգացման ուղղությամբ մինչև օրս անհրաժեշտ աշխատանք է տարվել հետևյալ ուղղություններով.
 ա/ ստեղծվել են դասավանդման նոր պահանջներին համատասխանող բուհական և դպրոցական դասագրքեր,
 բ/ աշխատանք է տարվել երիտասարդ գիտնականների հետ,
 գ/ ֆրանսերենի բաղադրիչը առկա է համալսարանի 2-րդ օտար լեզվի, երկրագիտության, մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի, հոգեբանության, արտասահմանյան գրականության ամբիոններում:
3. Ձեկուցման մեջ նշված ծրագրային հիմնադրույթների նպատակով.

3.1. Հանձնարարել ֆրանսերենի ամբիոնին մինչև 2006թ. դեկտեմբեր ամիսը համապատասխանեցնել բոլոր առարկայական ծրագրերը ժամանակակից կրթական պահանջներին:

3.2. Մինչև 2006թ. դեկտեմբերը հրատարակել տեսական դասընթացները, ինրպես նաև մշակել և ներկայացնել դրանց էլեկտրոնային տարբերակները:

3.3. Համագործակցել

ա/ 2-րդ օտար լեզվի, երկրագիտության, հոգեբանության, գրականագիտություն և արտասահմանյան գրականության ամբիոնների հետ միջառարկայական համագործակցությունը ամրապնդելու և խորացնելու նպատակով,

բ/ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ ֆրանսերենի դասավանդման նոր մեթոդների կիրառման նպատակով

գ/ հայագիտության ամբիոնի հետ զուգադրական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ համատեղ իրականացնելու և ղեկավարելու համար:

3.4. Հանձնարարել ֆրանսերենի ամբիոնին կոորդինացնելու վերոնշյալ ամբիոնների հետ համագործակցության աշխատանքները:

3.5. Ստեղծել գրական թարգմանության ստուդիա և լավագույն աշխատանքները ներկայացնել տպագրության:

3.6. Հանձնարարել մինչև հոկտեմբեր ամիսը ներկայացնել ՌԲԸ-ի 2006-2007 ուս.տարվա աշխատանքային ծրագիրը և ՌԲԸ-ի լավագույն զեկուցումները ներկայացնել տպագրության ուսանողական ավանախում:

3.7. Մշակել հատուկ դասընթացներ, որոնք ուսանողներին կուղղորդեն հետագայում կուրսային աշխատանքներ գրելիս:

3.8. Համալրել ամբիոնի ինտերնետային կայքը նոր ծրագրերով, առարկայական ուղեցույցներով:

4. Հանձնարարել ֆրանսերենի ամբիոնին զարգացնել կապերը միջազգային համապատասխան ուսումնական հաստատությունների և այլ կառույցների հետ:

4.1. Թույլ տալ 2006-2007 ուս.տարում թարգմանչական բաժնի արտադրական պրակտիկան անցկացնել տեղում՝ համալսարանի կայքը, եվրոխորհրդի կողմից ստացված նյութերը, ինչպես նաև համալսարանը ներկայացնող այլ նյութեր թարգմանելու համար:

5. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին քննարկել հետևյալ հատուկ դասընթացները մագիստրատուրայում նախատեսելու հարցը,

«Դիսկուրսի վերլուծության ֆրանսիական ավանդույթները»

« Ֆրանսիական պրագմատիկական տիկայի դպրոցը»,

« Վերլուծականության միտումները արդի ֆրանսերենում»

«Համընթաց թարգմանություն»:

6. Հանձնարարել համակարգչային կենտրոնին օժանդակել ֆրանսերենի ամբիոնին ուսումնական նոր նյութերի էլեկտրոնային տարբերակների ստեղծման և համալսարանի կայքում դրանց տեղադրման խնդրում:

3. Լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Գասպարյանի հաղորդումը համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման խնդիրների մասին, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ի կատարումն ՀՀ Կառավարության 22 դեկտեմբերի 2005 թվականի N 2307-Ն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի ԵրՊԼՀ-ում 2005/2006 ուս. տարվա II կիսամյակից կրեդիտային համակարգը կրթափորձի կարգով մասնակիորեն կիրառելու վերաբերյալ՝ օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետների փորձը համարել դրական:
2. Արձանագրել, որ կրեդիտային համակարգի կիրառման դրական կրթափորձը հնարավոր է դարձնում նոր ուսումնական տարվանից տարածել այն ամբողջ համալսարանում:
3. Նշել, որ ուսումնական գործընթացի կրեդիտային եղանակով կազմակերպումը լիարժեք ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել ենթաօրենսդրական մի շարք փոփոխություններ, մասնավորապես ներկայիս կարգերը ուսանողների կուրսից կուրս փոխադրման, ակադեմիական պարտքերի և նրանց լուծարման, հեռացման և կուրս կրկնելու, բուհից բուհ տեղափոխվելու, արտերկրի ընդունելության կազմակերպման մասին:
4. Ներկայիս ուսումնական պլանների պարտադիր բաղադրիչը չի նպաստում նախատեսված խորացված մասնագիտական իրազեկությունների ու հմտությունների ձևավորմանը և կրեդիտ-ժամերի ճշգրիտ բաշխմանը ուսանողական շաբաթական ծանրաբեռնվածության 30 ժամի սահմաններում:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ ԿԳՆ և ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերով մշտական հանձնաժողով:

4. Լսելով և քննարկելով ուսումնական մասի վարիչ Ա.Սարգսյանի հաղորդումը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքների ընթացքի մասին, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ընդունել ի գիտություն Ուսումնական մասի վարիչ Ա.Սարգսյանի հաղորդումը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքների ընթացքի մասին:

5. Լսելով և քննարկելով ժամանակակից ռուսաց լեզվի և գործնական ռուսաց լեզվի ամբիոնների միացման մասին, գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Միացնել ժամանակակից ռուսաց լեզվի և գործնական ռուսաց լեզվի ամբիոնները և նոր ստեղծված ամբիոնը վերանվանել ռուսական և սլավոնական լեզվաբանություն:

2. Համաձայն “Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ամբիոնի վարիչների ընտրության” կարգի 14-րդ կետի, ամբիոնների միացումից կազմավորված նոր ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը լսել Գիտխորհրդում, իսկ մինչ այդ ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչի պարտականությունները դնել ժամանակակից ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, Բ.Գ.Ք., դոցենտ Լ.Ե.Սարկոսյանի վրա:
3. Հանձնարարել ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչին կատարել ամբիոնի սեկցիաների կառուցվածքային փոփոխությունները, ըստ հետևյալ ուղղությունների
 - գործնական ռուսաց լեզուն որպես մասնագիտություն
 - գործնական ռուսաց լեզուն ոչ մասնագիտական ֆակուլտետների համար
 - գործնական ռուսաց լեզուն ԼՄՀ ֆակուլտետի, «միջազգային լրագրություն», «միջազգային զբոսաշրջություն» և «թարգմանություն» բաժինների համար
 - սլավոնական բանասիրության:
4. Հանձնարարել ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնին մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը մշակել նոր ծրագրեր կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան ըստ վերը նշված ուղղությունների:
5. Հանձնարարել ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչին և ՌՕԼ ֆակուլտետի դեկանին մշակել և ֆակուլտետի խորհրդում հաստատել ծրագրերի իրականացման և քննարկման ժամանակացույցը ըստ ուղղությունների հերթականության կարևորության:
6. Հանձնարարել ՌՕԼՖ-ի խորհրդին 2006/2007 ուս. տարվա յուրաքանչյուր խորհրդի նիստում (մինչև 2006թ. դեկտեմբերի 20-ը) քննարկել և հաստատել մշակված ծրագրերը ըստ կատարողականի:
7. Հանձնարարել ՌՕԼՖ-ի դեկանին պարբերաբար համալսարանի Գիտխորհրդին կից գործող ուսումնամեթոդական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հարցերը ըստ հաստատված ժամանակացույցի:
8. Հանձնարարել ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչին և ՌՕԼ ֆակուլտետի դեկանին 2007թ. հունվարին կայանալիք ԵրՊԼՀ-ի Գիտխորհրդին զեկուցել սույն որոշման ներքո կատարված աշխատանքների մասին:
9. Հանձնարարել ուսումնական մասին զբաղվելու երկու ամբիոնների միացման կազմակերպչական հարցերով/ լաբորանտների տեղավորման, գույքի տնօրինման և այլն/:
10. Ն.Կ.Առաքելյանին երկարատև աշխատանքի համար հայտարարել շնորհակալություն: